ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք, 5-փ 7, Հեռ. 2-42-26 , norik.melkonyan@mail.ru

N 1/56
22 մարտ 2019թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտ ամսին կայացրած թիվ 09-Ա-14-Ա որոշումները:

Առդիր՝ 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Կատ. քարտուղար՝ Մ. Կարապետյան
Հեռ.՝ 098-29-30-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2019 թվականի N 09-Ա

ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՔՆՈՒՄ <<ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով,ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2019 թվականի փետրվարի 1-ի N01/18/613-19 հանձնարարականի՝

որոշում եմ

1. <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում 2019 թվականի մարտի 23-ին, Ողջաբերդ համայնքում իրականացնել համապետական շաբաթօրյակ:
2. Շաբաթօրյակի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ներգրավել համայնքի բնակիչներին և համայնքի տարածքում գործող բոլոր կազմակերպությունների հնարավորություններն ու միջոցները:
3.Հանձնարարել համայնքի տարածքում գործող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ղեկավարներին շաբաթօրյակի միջոցառումների շրջանակներում մաքրել, բարեկարգել իրենց կազմակերպության տարածքը և հարակից շրջակայքը:
4. Հանձանարարել Ողջաբերդի հանայնքապետարանի աշխատակազմին համապետական շաբաթօրյակի օրը կազմակերպություններին ապահովել անհրաժեշտ տեխնիկայով,գործիքներով և նյութերով:
5. Շաբաթօրյակի անցկացման և կատարման աշխատանքների ծանուցման և դրանց նկատմամբ հսկողության իրականացումը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մ. Կարապետյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 19 թ. Մարտ 18
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2019 թվականի N 10-Ա

ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգի 4-րդ և 7-րդ կետերի պահանջներով՝

որոշում եմ՝

1. Ողջաբերդ համայնքի միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի կազմում առաջադրել Գրիգոր Մելքոնյանի թեկնածությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 19 թ. Մարտ 18
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2019 թվականի N 11-Ա

ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2019ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 23-րդ հոդվածի պահանջները՝

որոշում եմ՝

1. 2019 թվականի ընթացքում Ողջաբերդ համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտի՝ համայնքում պաշտոնական հրապարակման օր նշանակել համայնքի տարածքի տարբեր վայրերում այդ նպատակով նախատեսված ցուցատախտակներին փակցնելու օրը:
2. Նորմատիվ իրավական ակտն հրապարակելու պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղար Մարիամ Կարապետյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 19 թ. Մարտ 18
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2019 թվականի N 12-Ա

ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝

որոշում եմ

1. Հաստատել Ողջաբերդ համայնքի 2019 թվականի միջոցառումների ծրագիրը՝ *համաձայն հավելվածի*:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 19 թ. մարտ 18
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2019 թվականի N 13-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11,22.1 կետերի պահանջներով և հիմք ընդունելով Սիլվա Գրիգորյանին պատկանող Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի 6-րդ փողոցի թիվ 16 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի և տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով , չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

որոշում եմ՝

1.Սիլվա Գրիգորյանին պատկանող Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի 6-րդ փողոցի թիվ 16 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված S=139.36քմ նկուղը, S=109.90քմ 1-ին հարկը, S=109.90քմ ձեղնահարկը, S=8.68քմ, S=36.58քմ և S=5.88քմ, S=11.12քմ բաց պատշգամբները, S=8.05քմ, S=6.23քմ, S=9.90քմ և S=10.47քմ աստիճանավանդակները, S=12.24քմ և S=14.84քմ լողավազանները, S=28.62քմ անասնաշենքը, S=20.06քմ խորդանոցը, S=35.39քմ ավտոտնակը, S=1.35քմ պարիսպը, S=21.63քմ տնտեսական շինությունը, S=26.34քմ հավաբունը և S=1.43քմ զուգարանը համարել օրինական:
2.Հաշվի առնելով, որ ինքնակամ շինություններից S=139.36քմ նկուղը, S=109.90քմ 1-ին հարկը, S=109.90քմ ձեղնահարկը, S=8.68քմ, S=36.58քմ և S=5.88քմ, S=11.12քմ բաց պատշգամբները S=8.05քմ, S=6.23քմ և S=10.47քմ աստիճանավանդակները, S=12.24քմ և S=14.84քմ լողավազանները, S=28.62քմ անասնաշենքը, S=20.06քմ խորդանոցը, S=35.39քմ ավտոտնակը, S=1.35քմ պարիսպը, S=21.63քմ տնտեսական շինությունը կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, նշված ինքնակամ շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3.Հաշվի առնելով, որ ինքնակամ շինություններից S=9.90քմ աստիճանավանդակը, S=26.34քմ հավաբունը և S=1.43քմ զուգարանը կառուցվել են 2002 թվականին սահմանել, որ հողամասի սեփականատերը ինքնակամ կառույցների օրինականացման

համար.
1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ողջաբերդ համայնքի բյուջեի N 900105227010 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 29383 (քսան ինը հազար երեք հարյուր ութսուն երեք) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման կարգը հաստատելու մասին>> N912-Ն որոշման 13-րդ կետի համաձայն՝ տեղական բյուջե 60 օրվա ընթացքում սահմանված վճարումը կատարելուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 19 թ. Հոկտեմբեր 18
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 մարտի 2019 թվականի N 14-Ա

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ողջաբերդ համայնքի 6-րդ փողոցի թիվ 16 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզում 0006-0010 ծածկագիրը կրող, տնամերձ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.231101հա, որից 0.2000 հա մակերեսով հողամասը օրինական է և հատկացվել է Սիլվա Գրիգորյանին հիմք՝ համայնքի հողհատկացման քաղվածքը: Օրինական հողամասին կից առկա է ավել օգտագործվող 0.031101հա մակերեսով հողամաս, որը նույնպես փաստացի տիրապետվում է նշված քաղաքացու կողմից:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ավել օգտագործվող 0.031101 հա հողամասը չի գերազանցում հատկացված հողամասի 20%-ը, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ և նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար՝

որոշում եմ՝

1.Ճանաչել Սիլվա Գրիգորյանի կողմից Ողջաբերդ համայնքում օգտագործվող 0.231101 հա 0006-0010 ծածկագրով հողամասից 20% ավել հողամասի նկատմամբ նրա սեփականության իրավունքը՝ 0,031101 հա-ի նկատմամբ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 19 թ. մարտ 19.
գ.Ողջաբերդ